## Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Ջի ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Երևանի պետական համալսարան հիմնադրամի 2023թ փետրվարի 02-ի՝ <<Ջի ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

***1.1. անվավեր ճանաչել թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի 2023թ փետրվարի 02-ի՝ <<Ջի ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշում:***

***2. <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<Ջի ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:***

***3. <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<Ջի ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումարը:***

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Ա. ՕՀԱՆՅԱՆ**